եռամեծար վարդապետ եւ ուսուցչապետ Գրիգոր Տաթեւացիի ձեռնադրութեան

Մաշտոցին մէջ։

Սրրազանը իր քարոզի աւարտին անգամ մը եւս շեշտեց, որ Աստուած անսասան պահէ Մայր Աթոռ Ա. Էջմիածինը եւ առաւել պայծառացնէ Դայ Առաքելական Ա. Եկեղեցին, անոր ծոցին մէջ աւելցնելով որակաւոր վարդապետներու թիւը, որոնց վրայ այսօր աւելցաւ Յոգեշ Տ. Տաթեւ Վարդապետ Յակոբեանի անունը։

եկեղեցւոյ մէջ կատարուած արարողութեան իրենց մաննակցութիւնը բերին նաեւ «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Պրն. Յովհաննէս Պէրպէրեանի, եւ տուուչութեան արարողութեան շարականներու երգեցողու-

թիւնը կատարեց Էդուարդ Դաւիթեանը։

եկեղեցական արարողութենէն լետոլ Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ «Կարպիս Մանուկեան» սրահին մէջ տրուեցաւ ընդունելութիւն մը՝ կազմակերպուած Սենթ էթիենի եւ Լիոնի եկեղեցասէր տիկնանց կողմէ։



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏԱԹԵԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԱԿՈԲԵՄՆԻ

Ծնած է 1966 Յուլիս 7-ին Իրաքի Մուսուլ քաղաքին մէջ։ Նախնական ուսումը ստացած է Պաղտատի հայոց «Թարգմանչաց» Վարժարանին մէջ։ 1979 թուականին միջնակարգ ուսումը աւարտելէ ետք, նույն թուականին մեկնած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Յոգևոր ճեմարան։ 1981 թ. դեկտեմբերին ստացած է դպրութեան 4 աստիճաններ։ 1984 թ. դեկտեմբերին ստացած է ուրար կրելու իրաւունք, իսկ 1986 թ. Փետրուար 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տաճարին մէջ ստացած է սարկաւագութեան աստիճան։ 1986-ի Յուլիսին յաջողութեանք աւարտած է Յոգևոր ճեմարանը, իսկ 1988 թ. Մարտ 10-ին նոյն յարկի ներքոյ պաշտպանած է «Եւսեբիոս Կեսարացին Յայ Մատենագրութեան մէջ» թեմայով աւարտաճառը։ Պատրաստուած աւարտաճառը արժանացած է «գերազանց» գնահատանքի։

1989-1990 թթ. Եկեղեցիներու Յամաշխարհային խորհուրդի հովանաւորութեամբ ու կարգադրութեամբ ուսանած է Պոսէի և Ժընևի համալսարաններուն Աստուածաբանութեան ֆակուլտետին մէջ։ Այս միջոցին ծառայած է Ժընևի Ս. Յակոբ եկեղեցւոյ որպէս քարտուղար և սարկաւագ։ Յիմնած է Ձուիցերահայ Երիտասարդաց Միութիւնը և դասաւանդած է Կիրակնօրեայ դպրոցի մէջ։

1990-1992 թթ. ծառայած է Յոլանդիայի Ս. Յոգի եկեղեցւոյ մէջ ողպէս քարտուղար, սարկաւագ, խորհրդատու ազգային-եկեղեցական վարչութեան և հիմնած է կիրակնօրեայ վարժարան։

Իրաք վերադարձած է 1992 Փետրուար 13-ին, և 18 Փետրուար 1993-ին ձեռամբ Իրաքի բարեխնամ առաջնորդ Գերաշնորի Տ. Աւագ Արքեպիսկոպոս Ասատուրեանի, ձեռնադրուած է կուսակրօն քահանայ Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Սռաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ։ Պաղտատ պաշտօնավարութեան շրջանին եղած է հոգևոր հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցւոլ, դասաւանդած է տեղւոյն «Սրբոց Թարգմանչաց» վարժարանին մէջ որպէս դասախօս քրիստոնէական կրօնի, ինչպէս նաև Պաղտատի Կիրակնօրեայ Վшրժшրшնի։ 1992-1996 թթ. դшишւшնդшծ է նшև «Эшյ եկեղեցասիրաց կազմ»-ի 5 դասարաններուն Սուրբ Գրոց Մեկնութիւն և սոյն կազմի մէջ նշանակուած է որպէս հոգևոր խորհրդատու։ 1993-1996 թթ. թեմի բարեխնամ Առաջնորդի կողմէ նշանակուած է Իրաքի հայոց թեմի Դատաստանական խորհուրդի անդամ։ 1994-1995 թթ. դասախօսութիւններով և դասընթացքներով հանդէս եկած է «Իրաքի Տիկնաց Դայ Մշակութային Միութեան», «Պաղտատի Әայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան», ӘРԸՄ-ի և ӘՄԸՄ-ի մէջ։ 1993-1996 թթ. տարբեր հոդուածներով հանդէս եկած է «Լրաբեր» և «Չայն» իրաքահայ եռամսեայ ամսագրերուն մէջ։

1996-ին նշանակուած է Պոլսոյ Պատրիարքարանի «Լրաբեր» շարաթաթերթի խմբագրութեան անդամ և միևնոյն ժամանակ ստորագրած է հոդուածներ։ 1996-1997 թթ. հրաուիրուած է Մայր Սթոռ Ա. Էջմիածին, այնտեղ մասնակցած է Յայց. Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզչութեան Կեդրոնի գործունէութեանց, դասախօսած է Էջմիածին քաղաքի վեց կիրակնօրեայ վարժարաններու մէջ, ինչպէս նաև դասընթացքներով կրօնի ուսուցիչներու վերապատրաստման լսարաններուն, քարոզներով ամէն երեկոյ հանդէս եկած է Յայաստանի Պետական հեռուստատեսութեան «Սիրեցէը զմիմեանս» հաղորդաշարին, իսկ «խորան Լուսոյ»-ին՝ շաբաթը անգամ մը, ինչպէս նաև ծայնասփիւռով։ 1997 Փետրուարէն մինչև Օգոստոս դասաւանդած է Ք.Դ.Ք.Կ.-ի քարոզի լսարանին։

1997 թ. Սսպտեմբերին, նոյնպես Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Յայրապետի բարձր հովանաւորութեամբ, նշանակուած է Սէնթ-Էթիէնի ու շրջանի հայոց հոգևոր հովիւ։ Բազմաթիւ յօդուածններով աշխատակցած է սփիւռքահայ մամուլին։ 1997 թ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի խորհուրդով պատրաստած է իր վարդապետական թէզը՝ նիւթ ունենալով «Մատաղը հայ աստուածաբանութեան մէջ», որը յաջող կերպով պաշտպանելով 1999 Սեպտեմբերի 12-ին, ստացած է վարդապետական աստիճան։

ԴԻՐՄՆ ԼԻՈՆԻ ՊԱՅՈԺ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆԻ